ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏՈՎԿԱՅԻ  ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2024-2029

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համաձայն կարգի՝ դպրոցի զարգացման ծրագիրը ընդգրկում է հետևյալ բաղադրիչները.

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ . ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

7. ՌԻՍԿԵՐԸ

8. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

## 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասեր, պետականամետ քղաքցու դաստիարակությունն է: Դեռևս հնագույն ժամանակներից մեզ համար մշակույթն ու գիտությունը ծառայել են նպատակ և միջոց ազգային հարատևման համար: Մեր երկրի հազարամյա պատմությունը ցույց է տվել, որ հայն իր ինքնությունը պահպանել է գիր ու գրականության, մշակույթի ու դպրոցի շնորհիվ:

Շարունակաբար զարգացող ու փոփոխվող աշխարհում սեփական տեղը ունենալու համար անհարժեշտ է լինել մրցունակ, ունենալ հստակ քայլերի ալգորիթմ: Այդ նպատակի հիմքը ազգային հենքի վրա զարգացող դպրոցն է, նորագույն գիտելիքներով, կարողություններով ու կարողունակություններով քաղաքացին:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է 2024-2029 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Տաշիր համայքի կարիքները:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության :

**Լոռու մարզի <<Սարատովկայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի 2024-2029թվականների զարգացման ծրագիրը կազմվել է՝ համաձայն**

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին » ՀՀ օրենք
- Աշխատանքային օրենսգիրք
- «Կրթության մասին » ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք

- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշչի» դրույթներով
- Դպրոցի կանոնադրություն
- Դպրոցի ներքին իրավական ակտեր
- Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ, կարգեր
- ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականների պետական ծրագիրը

Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:
***Դպրոցը գտնվում է Լոռու մարզի Տաշիր խոշորոցված համայնքի Սարատովկա գյուղում: Կազմված է մեկ մասնաշենքից, երկհարկանի է: Կառուցվել է 1977 թվականին, մակերեսը՝*** *936,7մ²* ***: Դասասենյակները լուսավոր են, վերանորոգված, պատուհանները փոխված են: Առաջին հարկում են գտնվում 4 վերանորոգված սանհանգույցները՝ հարմարեցված նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Վերանորոգվել է ԿԱՊԿ ունեցող երեխաների համար նախատեսված դասասենյակը:***
***Դպրոցում ապահովված են անվտանգ կենսագործունեության համար նախատեսված պայմանները: Դպրոցն ունի դեպի ներս բացվող 1 հիմնական և 1 պահուստային ելքեր:***
***Դպրոցի հարակից տարածքում կա բացօթյա սպորտային հրապարակ, որը տաք եղանակներնեին օգտագործվում է ֆիզկուլտուրայի դասի ժամանակ:***

Դպրոցում աշխատում են 15 ուսուցիչներ՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ:

2023-2024 ուսումնական տարում աշակերտների թիվը 73 է: Մանկավարժական խորհուրդը կազմված է 15 անդամից:
Միացյալ կառավարման խորհուրդը կազմված է 14 անդամից:
Ծնողական խորհուրդը կազմված է 12 անդամից:
Աշակերտական խորհուրդը կազմված է 14 անդամից:

**Սարատովկայի միջնակարգ դպրոցը բավարարում է հետևյալ կրթական կարիքները՝**

1) **Տարրական հանրակրթական/ լիցենզիա N 0229/-46 տեղ**
2) **Հիմնական հանրակրթական/լիցենզիա N 0223/ -52 տեղ**
3) **Միջնակարգ հանրակրթական /լիցենզիա N 0186/ -40 տեղ**

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:
Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով, ունի հաստատված համադպրոցական տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլան, ուսումնական աշխատանքների տարեկան պլան, դասղեկական պլաններ: Բոլոր փաստաթղթերը տեղադրված են <<Պաշարների շտեմարանում1>>:

Դպրոցի զարգացման սույն ծրագրի նպատակն է՝

- Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար,
- Սովորողի կրթական կարիքի գնահատում,
- Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ,
- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կյանքին ակտիվորեն մասնակից լինելը
- Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ,
- Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ:

Ժամանակակից դպրոցի հենասյուները պետք է լինեն արհեստավարժ ուսուցիչներները, ովքեր գիտակցում են, որ կրթում են 21-րդ դարի սերնդի: Ուսումնական պրոցեսի կենտրոնում աշակերտն է, ով ցանկանում է ունենալ հրապուրիչ միջավայր սովորելու համար: Ուսուցիչը պետք է կարողանա դասարանում ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող ազատ և անկաշկանդ կդրսևորի իրեն՝ անկախ իր հնարավորություններից:

[1] https://lib.armedu.am/article/14944

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար պետք է լինեն հարմարեցումներ:
Դպրոցում բացառված են որևէ խտրական վերաբերմունք, բուլինգի դրսևորում:Աշակերտները ստանում են անհրաժեշտ աջակցությունը ուսուցիչների և համադասարանցիների կողմից:

## 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով դպրոցի ներքին գնահատման արդյունքները, հաստատության ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Հաշվի են առնվել նաև հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները:
Ստորև ներկայացվում են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| *Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը* | |
| • Հիմնանորոգված գլխավոր մասնաշենքը<br>• Հաստատության տարածքը ցանկապատված և անվտանգ է սովորողների ազատ  տեղաշարժման համար.<br>• Տարածքի ընդարձակությունը, դասասենյակների մեծությունը և լուսավորվածությունը<br>• Ընդարձակ մարզահրապարակը<br>• Առկա է շուրջօրյա հոսող խմելու ջուր:<br>• Հաստատությունը ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, դասասենյակներում և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է կարգին:<br>• Դպրոցում ստեղծվել և վերանորոգվել է ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար նախատեսված դասասենյակ<br>• Դպրոցում կան թվով 4 վերանորոգված սանհանգույցներ, որոնք հարմարեցված են հաշմանդամություն ունեցող աշակերտներին<br>• Դպրոցում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորիա<br>• Դպրոցի բոլոր պատուհանները փոխված են<br>• Երկրորդ հարկի դռները փոխված են | • Համակարգչային դասասենյակի ստեղծում և կահավորում<br>• Լաբորատորիաների ստեղծում և կահավորում, անհրաժեշտ նյութերի ձեռքբերում<br>• Սպորտային մարզադահլիճը կարիք ունի վերանորոգման<br>• Կարիք կա սպորտային գույքի ձեռքերման<br>• Նիստերի դահլիճի բացակայություն<br>• Առաջին հարկի դռները կարիք ունեն նորերով փոխարինման |

| Շենքային պայմանները | Քանակը | Ընդհանուր մակերեսը/մ² | Փաստացի վիճակը |
|---|---|---|---|
| Երկհարկանի 1 մասնաշենք | 1 | 936,7 | բավ |
| Դասասենյակ | 10 | 313 | բավ |
| Գրադարան | 1 | 15 | բավ |
| Ուսուցչանոց | 1 | 30 | Լավ |
| Տնօրենի կաբինետ | 1 | 24 | լավ |
| <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա | 1 | 30 | բավ |
| Շախմատի սենյակ | 1 | 54 | բավ |
| Ճաշարան | 1 | 72,6 | լավ |
| Սննդի պահեստ | 1 | 27 | լավ |
| Սանհանգույցներ | 4 | 72 | լավ |
| մարզադահլիճ | 1 | 149,6 | բավ |
| | | | |

| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
|---|---|
| | ●Ֆինանսական միջոցների սակավություն, բարեգործական միջոցների բացակայություն<br>●Ֆորսմաժորային իրավիճակներ, բնական աղետներ |

| | |
|---|---|
| Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքերում (վարձակալությամբ տարածքներ, վճարովի խմբակներ) | ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>●Համատեղ աշխատանքների, հետևողական և մշակված գործողությունների իրականացում<br>●Դպրոցի շրջանավարտների և շահագրգիռ մարդկանց ներգրավում: |
| ՆՊԱՏԱԿ | ●դպրոցի շենքային պայմանների բարելավում,<br>● Կաբինետային համակրգի ստեղծում<br>●դասասենյակների,կաբինետների կահավորում<br>Ինֆորմատիկայի կաբինետի/սմարթ կաբինետի/ ստեղծում<br>Սպորտային դահլիճի վերանորոգում |
| ԽՆԴԻՐ | ● սետղծել դասասենյակներ, ,առարկայական կաբինետներ և լաբորատորիաներ<br>● վերանորոգել միջանցքների<br>●վերանորոգել մարզադահլիճ<br>Ապահովել մարզադահլիճը անհրաժեշտ գույքով<br>Սմարթ կաբինետ/<br>Ապահովել համակարգչային տեխնիկայով և լրացուցիչ սարքավորումներով ու ծրագրերով |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ●Ֆինանսական միջոցների ձեռքբերում<br>●Շահագրգիռ անձանց և կազմակերպությունների ներգրավում |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ●Տնօրեն,<br>Վարչատնտեսական համակարգող |

<table>
<tr><td>ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ</td><td>2024-2029թթ.</td></tr>
<tr><td>ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</td><td>● բարեկեցիկ և ապահով շենքային պայմանների առկայություն<br>● ունենք ժամանակակից դասի պահանջներին համապատասխան միջավայրի առկայություն<br>Կահավորված և ստանդարտներին համապատասխանող սպորտային դահլիճի առկայություն<br>Փոխված են դպրոցի առաջին հարկի դասարանների դռները</td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td colspan="2">Նյութատեխնիկական բազան</td></tr>
<tr><td>ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված դասասենյակ, հագեցած անհրաժեշտ գույքով և հարմարեցումներով:<br>Ընդարձակ, լուսավոր դասասենյակներ, հաճելի մթնոլորտ կրթության համար:<br>Արմաթ ինժեներական լաբորատորիա՝ հագեցած անհրաժեշտ սարքավորումներով և ծրագրերով, ռոբոտի հավաքածու, 3D տպիչ, լազերային և շաղափային հաստոց և այլն:<br><br>Դպրոցի պրոյեկտորը հաճախակի կիրառվում է դասերի ժամանակ: Ժամանակակից դասը անհնար է պատկերացնել առանց տեխնիկական միջոցների կիրառման:<br>Սպորտդահլիճ, ֆիզկուլտուրայի դասերի և երեխաների ֆիզիկական բարձր պատրաստվածության մակարդակ ապահովելու համար:</td><td>Համակարգչային դասասենյակի բացակայություն/ կամ Սմարթ դասասենյակի/<br>Արմաթի համակարգիչները բավարար չեն դասապրոցեսում կիրառման համար: Ծրագրերի ապահովման անհամապատասխանություն, դասասենյակում ինտերնետ կապի բացակայություն: Նոր չափորոշիչին համապատասխան կրթության որակ ապահովելու համար անհրաժեշտ է համակարգչային սարքավորումներ և ինտենետային կապ:<br>Էլեկտրոնային գրատախտակի բացակայություն<br><br><br>Լաբորատորիաների և լաբորատոր գույքի բացակայություն:<br>Սպորտդահլիճում մարզական գույքի և հարմարությունների բացակայություն: Սպորտդահլիճը կարիք ունի վերանորոգման և պետական չափանիշներին համապատասխանեցման:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Վերանորոգված ճաշարան, համալրված անհրաժեշտ գույքով և համապատասխան տեխնիկայով: Պահպանված են բոլոր սանիտարահիգիենիկ պայմանները՝ երեխաներին, իրենց տարիքային առանձնահատկություններին համապատասխան առողջ սննդով ապահովելու համար: Աշակերտները կանոնավոր կերպով օգտվում են առողջ և տաք սննդից: | Դպրոցի գրադարանը փոքր է, գրքերը հին են,ծրագրային գեղարվեստական գրքերը քիչ են: Չունի համապատասխան լուսավորություն և օդափոխություն: Կարիք կա գրադարանի վերանորոգման, նոր գեղարվեստական գրքերի ձեռքբերման, էլեկտրոնային շտեմարանի ստեղծման:<br>Առարկայական դասասենյակների, լաբորատորիաների, լաբորատոր գույքի բացակայություն:<br>Ուսումնական քարտեզների և պաստառների մաշվածություն կամ բացակայություն:<br>Ճաշարանում սեղան- աթոռները հարմարեցված են և հին:<br>Կարիք կա նոր սեղանների և աթոռների ձեռքբերման:<br>Ճաշարանը ջեռուման կարիք ունի.   այժմ ջեռուցվում է հոսանքի տաքացուցիչներով: |

| Հ/h | Անվանումը | քանակը | վիճակը |
|---|---|---|---|
| 1. 1 | միկրոավտոբուս | 1 | բավ |
| 2. | Գրքերի պահարան | 3 | բավ |
| 3. | Երկաթյա չհրկիզվող պահարան | 1 | բավ |
| 4. | գրատախտակ | 11 | բավ |
| 5. | Բազմոց | 1 | բավ |
| 6. | Համակարգչի սեղան | 1 | բավ |
| 7. | Շախմատի սեղան-աթոռ | 22 | Կարիք ունի փոխարինման |
| 8. | Աշակերտական սեղան-աթոռ | 30 | Կարիք ունի փոխարինման |
| 9. | Արմաթի համակարգչային սեղան1 | 1 | լավ |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Արմաթի համակարգչային սեղան2 | 1 | լավ |
| 11. | Արմաթի համակարգչային սեղան3 | 1 | լավ |
| 12. | Արմաթի համակարգչային աթոռ | 16 | լավ |
| 13. | Լվացարան | 2 | բավ |
| 14. | Պլանշետ | 1 | բավ |
| 15. | Լազերային տպիչ | 1 | բավ |
| 16. | համակարգիչ | 6 | բավ |
| 17. | Տպիչ+սկաներ | 1 | բավ |
| 18. | Տպիչ | 1 | բավ |
| 19. | Անխափան սնուցման սարք | 1 | բավ |
| 20. | Ցանցային սարք | 1 | բավ |
| 21. | Արմաթ մինի համակարգիչ | 5 | լավ |
| 22. | Արմաթ համակարգիչ | 2 | լավ |
| 23. | Արմաթ լազերային հաստոց | 1 | լավ |
| 24. | Արմաթ 3D տպիչ | 1 | լավ |
| 25. | Հեռուստացույց | 1 | բավ |
| 26. | Գազի վառարան | 5 | բավ |
| 27. | Կրակմարիչ | 4 | լավ |
| 28. | Փոշեկուլ | 1 | լավ |
| 29. | Արմաթ ռոբոտի հավաքածու | 1 | լավ |
| 30. | Արմաթ նորացման գործիքների հավաքածու | 1 | լավ |
| 31. | Դյուրակի համակարգիչ | 1 | լավ |
| 32. | Պրոյեկտոր | 1 | լավ |
| 33. | Սառնարան | 1 | լավ |
| 34. | Կենցաղային կշեռք | 1 | լավ |
| 35. | Լվացարան | 3 | լավ |
| 36. | Սալօջախ 4 աչք ջեռոցով | 1 | լավ |

| | | | |
|---|---|---|---|
| 37. | Կոնվեկցիոն ջեռոց | 1 | լավ |
| 38. | Ջրատաքացուցիչ | 1 | լավ |
| 39. | Սեղան աշխատանքային չ/պ | 1 | լավ |
| 40. | Լվացարան 2 թաս չ/պ | 1 | լավ |
| 41. | Դարակաշար 4 հարկ չ/պ | 3 | լավ |
| 42. | Էլեկտրական ջրատաքացուցիչ | 1 | լավ |
| 43. | Հոսանքի կարգավորիչ | 1 | լավ |
| 44. | Ջերմաչափ | 1 | լավ |
| 45. | Քիվ | 17 մ | բավ |
| 46. | Այծիկ | 1 | բավ |
| 47. | Մարմնամարզական գորգ | 1 | բավ |
| 48. | Աշակերտական աթոռ | 70 | Կարիք ունի փոխարինման |
| 49. | Վոլեյբոլի ցանց | 2 | բավ |
| 50. | Ցատկապարան | 4 | բավ |
| 51. | Շախմատ | 5 | բավ |
| 52. | Սեղանի թենիս | 1 | բավ |
| 53. | Ասիական թաս | 3 | բավ |
| 54. | Ծորակ | 2 | բավ |
| 55. | Ճնշաչափ | 1 | բավ |

| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
|---|---|
| | ●Ֆինանսական միջոցների սակավություն, բարեգործական միջոցների բացակայություն |

| | |
|---|---|
| Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռբերում (վարձակալությամբ տարածքներ, վճարովի խմբակներ) | ●Ֆորսմաժորային իրավիճակներ, բնական աղետներ<br><br>**ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br><br>●Համատեղ աշխատանքների, հետևողական և մշակված գործողությունների իրականացում<br>●Դպրոցի շրջանավարտների և շահագրգիռ մարդկանց ներգրավում: |
| **ՆՊԱՏԱԿ** | ●դասասենյակների,կաբինետների կահավորում<br>Լաբորատոր գույքի ձեռքբերում<br>Սպորտային գույքի ձեռքբերում<br>Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում<br>Գրադարանային ֆոնդի թարմացում,<br>Ծրագրերին համապատասխան էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում |
| **ԽՆԴԻՐ** | Ապահովել մարզադահլիճը անհրաժեշտ գույքով<br>Ապահովել համակարգչային տեխնիկայով և լրացուցիչ սարքավորումներով ու ծրագրերով |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | ●Ֆինանսական միջոցների ձեռքբերում<br>●Շահագրգիռ անձանց և կազմակերպությունների ներգրավում |
| **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ** | ●Տնօրեն,<br>Վարչատնտեսական համակարգող |
| **ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ** | 2024-2029թթ. |
| | Կահավորված և ստանդարտներին համապատասխանող սպորտային գույքի առկայություն |

| | |
|---|---|
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Ժամանակակից համակարգչային տեխնիկայի և ծրագրիերի առկայություն, որոնք դասը դարձնում են ավելի արդյունավետ<br>Լաբորատոր գույքի առկայություն<br>Դիդակտիկ նյութերի առկայություն |
| ***Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն*** | |
| Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝խորհուրդը ։<br>Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհրդակցական մարմինները՝<br>**կառավարման խորհուրդ,**<br>**մեթոդական միավորումներ,**<br>**մանկավարժական խորհուրդ,**<br>**ծնողական խորհուրդ,**<br>**աշակերտական խորհուրդ**, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները։<br>● Կառավարման խորհուրդը միացյալ խորհուրդ է, գործում է հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերի համապատասխան։ Նիստերը գումարվում են ըստ օրենքի՝ երեք ամիսը մեկ անգամ։ Նիստերին մասնակցում են խորհրդի բոլոր անդամները։<br>Խորհրդի նիստերի ժամանակ քննարկվում են եռամսյակային հաշվետվությունները, մասնակցում են ներքին գնահատմանը։<br>Տնօրենի ներկայացմամբ քննարկվում է բյուջեի պլանավորումը , նախահաշիվը, հաստիքացուցակը, որոնք հավանության արժանանալու դեպքում ներկայացվում են լիազոր մարմնի հաստատման։<br>Խորհրդի համաձայնությամբ դպրոցում իրականացվել են | ● Դպրոցի դերի նվազման պատճառով նվազում է դպրոցի կառավարմանը մասնակցելու ցանկությունը։<br>Ցածր է խորհրդի բոլոր գործառույթների մասին իրազեկվածությունըՄիացյալ խորհրդի պարագայում նիստերի կազմակերպման և անդամների մասնակցության ապահովման դժվարություն կա։<br>Կառավարման խորհրդի անդամների վերապատրաստման ծրագրերի բացակայություն։<br>Զարգացման ծրագրի կատարողականի վերահսկողությունը ցածր է։<br><br>Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ<br>● Ծնողները պասիվ են , դպրոց են գալիս միայն ըստ անհրաժեշտության<br>Հաճախ չեն հետաքրքրվում ուսումնական գործընթացով |

| | |
|---|---|
| հաստատության կարիքներից բխող գնումներ, շինարարական և նորոգման աշխատանքներ:<br>Հաստատությունում ապահովված է մանկավարժական ինքնավարության, ակադեմիական ազատության, դրական և ապահով մթնոլորտ բոլոր աշխատակիցների համար.<br>Հաստատությունում ուսումնական գործընթացն իրականացվում է հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների, մանկավարժների, սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում.<br>Հաստատությունում որոշումները կայացվում են համագործակցության արդյունքում, առանձին իրավիճակների կամ խնդիրների քննարկման ժամանակ ապահովվում է բոլոր կողմերի մասնակցությունն ու նրանց դիրքորոշումների ներկայացումը.<br>Հաստատության կառավարման գործընթացներում բոլոր շահակիցների խմբերին հատկացվում է ժամանակ՝ անհրաժեշտ դիտարկումներ և առաջարկներ ներկայացնելու համար:<br><br>● Մանկավարժական խորհուրդը երկամսյա պարբերականությամբ իրականացնում է հերթական նիստեր, ինչպես նաև, անհրաժեշտությա դեպքում, գումարվում են արտահերթ նիստեր: Ուսման առաջադիմության ու որակի և դաստիարակության հետ կապված բոլոր հարցերը քննարկվում են նիստերի ժամանակ, տրվում լուծումներ: Քննարկվում են արտադասարանային և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը: Քննարկվում են նաև նոր չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի, ուսումնական խմբակների, երկարօրյա խմբակների, նախագծային աշխատանքների և այլ հարցեր: Նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են նաև աշակերտական և ծնողական խորհրդի անդամները:<br>Դպրոցը գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում՝ որպես կամավորներ: | |

| | |
|---|---|
| Ծնողական խորհրդի նախագահ ընտրվում է փակ քվեարկությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:<br><br>● Ծնողական խորհուրդը աջակցում է ուսումնադաստիարակչական աշխատանքներին:<br>ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվում են աշխատանքներ՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում:<br>ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավված են արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում:<br>● Մեթոդական միավորումներում ընդգրկված են հաստատության բոլոր ուսուցիչները: Դպրոցում գործում է երեք մեթոդական միավորումներ՝<br>1. « Տարրական<br>2. «Հումանիտար<br>3. «ԲՏՃՄ<br>Նիստերի ժամանակ քննարկվում են մեթոդմիավորման փաստաթղթերի վարման կարգը,մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող և բազմաթիվ այլ հարցեր:<br>Դպրոցի մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի ճիշտ ռազմավարության ընտրությունն է, ուսումնադաստիարակչական գործընթացի, դասավանդման ընթացիկ վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի արդյունավետության վերլուծությունը և այլն: | |

| | |
|---|---|
| Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջների և պետական ծրագրերի կատարումը:<br>Միասնական նպատակների ուսուցման և դաստիարակության համար մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները ունեն և կշարունակեն ունենանալ ցուցակներ՝<br>● Սոցիալական աջակցություններից օգտվող աշակերտների,<br>● նյութապես անապահով աշակերտների,<br>● միակողմանի ծնողազուրկ աշակերտների,<br>● ծնողական խնամքից զրկված աշակերտների,<br>● միայնակ մոր/հոր խնամքի տակ գտնվող աշակերտների,<br>● հաշմանդամություն ունեցող աշակերտների<br>Դպրոցի տնօրենությունը խրախուսում է մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների նախաձեռնությունները, փորձում արագ լուծումներ տալ ներկայացված խնդիրներին: | |
| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
| Տնօրենի և կառավարման խորհրդի ակտիվ համագործակցություն | ●Շահագրգռվածության կամ ցանկության պակաս<br>●Ֆորսմաժորային իրավիճակներ<br>ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>●Համատեղ աշխատանքների, հետևողական և մշակված գործողությունների իրականացում |
| ՆՊԱՏԱԿ | Կառավարման խորհրդի մասնակցության և դերի արժևորում<br>Մանկավարժական խորհրդի ակտիվ ներգրավվածություն |

| | |
|---|---|
| | դպրոցական խնդիրների լուծմանը<br>Ծնողական խորհրդի գործունեության բարելավում<br>Ծնողխորհրդի ակտիվ մասնակցություն հարցերի քննարկմանը, |
| ԽՆԴԻՐ | Ապահովել միացյալ կառավարման խորհրդի անդամների մասնակցությունը նիստերին<br>Զարգացնել կառավարման և խորհրդակցական մարմինների անդամների կարողունակությունները<br>Ապահովել ծնողական խորհրդի նախագահի ակտիվ մասնակցույթւնը մանկավարժական խորհրդի նիստերին |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ և վերապատրաստումներ խորհրդի անդամների մասնակցությամբ |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ●Տնօրեն,<br>Փոխտնօրեն, մ/մ նախագահներ |
| ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | 2024-2029թթ. |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Կառավարման խորհրդի անդամները լիովին մասնակցում են իրենց գործառույթների իրականացմանը<br>Ծնողական խորհուրդը, իր գործառույթների համաձայն մասնակցում է նիստերին և քննարկումներին<br>Մեթոդ միավորումները աշխատում են ամբողջ ծավալով, իրականացնելով նոր ՀՊՉ պահանջների կատարում |

| | |
|---|---|
| | |
| ***Համատատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ*** | |
| Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը:<br>Դպրոցը կատարում է Լիազոր մարմնի՝ Լոռու մարզպետարանի օրենքին չհակասող հանձնարարականները, մասնակցում, քննարկումների, մասնակցում մարզային կրթական անցուդարձին:<br>ՀՀ կրթության տեսչական մարմնի ստուգումների արդյունքների ուսումնասիրությունները նպաստում են դպրոցում առկախնդիրների վերհանմանը, թերությունների շտկմանը:<br>Ուսուցիչներն ու տնօրենությունը ընդգրկվում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին:<br>Արդյունավետ համագործակցություն է ընթանում Գնահատման Թեստավորման Կենտրոնի հետ՝ հատկապես քննական գործընթացների պատշաճ կազմակերպման և իրականցման շուրջ:<br>Դպրոցը ակտիվորեն համագործակցում է Տաշիրի համայնքապետարնի հետ, գործուն մասնակցություն է ունենում համայնքային միջոցառումներին, համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության:<br>1. Այցելություն թանգարաններ, Եռաբլուր, | Դպրոցի առանձնահատկություններից ելնելով՝ երբեմն առաջադրված խնդիրների դժվար իրագործելիությունը:<br>Նախագծային աշխատանքների պակասը կամ համայնքի կարիքների ուսումնասիրման արդյունքում պլանավոված նախագծերի բացակայությունը<br>Ծնողական համայնքի նախաձեռնությունների պասիվությունը<br>Միջազգային կրթական կազմակերպությունների համագործակության բացակայություն |

պատմամշակութային արժեք ունեցող վայրեր ;

2. Տարբեր սպորտաձևերում և մշակութային տարբեր մրցույթ- փառատոններում դպրոցի սաների գրանցած հաջողությունների լուսաբանում:

3. □Հանդիպումներ ԱԻՆ , ՀՀ ոստիկանության աշխատակիցների հետ, ովքեր հանդես են եկել դասախոսություններով,ինչպես նաև տարհանման հատուկ ուսումնավարժանքի անցկացում / նկարները տեղադրված են դպրոցի facebook-յան էջում *հղումը ներկայացվում է*/ https://www.facebook.com/profile.php?id=100028312034115

4. Հաճախակի կազմակերպվում են զրույցներ <<Դասը վարում է ոստիկանը>> վերնագրով, որտեղ աշակերտները իրենց հուզող հարցերն են ուղղում ոստիկանության տեսուչներին, լսում դասախոսություններ:

5. Տարաբնույթ միջոցառումներ՝ ռազմահայրենասիրական, մշակութային, գրական խոսքի զարգացման, արվեստի տարբեր ճյուղերի, նշանավոր գործիչների, նրանց ստեղծագործությունների հետ կապի հաստատում

6. Համապետական շաբաթօրյակների կազմակերպում և իրականացում, որի ընթացքում կազմակերպվում է նաև ծառատունկ:

**Ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումն կանխարգելելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերը և միջոցառումները**

| Ծրագիրը կամ միջոցառումը (նշել թեման) | Ամսաթիվը | Դասարանը |
|---|---|---|
| | | |

| | | |
|---|---|---|
| **1. <<Պասիվ ծխող>>** | **05.03.2023թ.** | **9 -12** |
| | | |
| **3.<<Դասը վարում է ոստիկանը>>:** | **Մայիս 2023 թ.** | **9-12** |
| | | |
| **4. «Պայքար թմրամիջոցների և հոգեմետ դեղերի դեմ»** | **Ապրիլ 2023 թ.** | **9-12** |
| | | |
| **5.Սովորողի վարքագիծը տանը և դպրոցում:** | **Ուստարվա ընթացքում** | **9-12** |

| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
|---|---|
| Տնօրենի , ծնողական համայնքի ակտիվություն, մասնակցութուն համայնքային, մարզային և համապետական միջոցառումների | ●Շահագրգռվածության կամ ցանկության պակաս<br>●Ֆորսմաժորային իրավիճակներ<br>ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>●Համատեղ աշխատանքների, հետևողական և մշակված գործողությունների իրականացում |
| ՆՊԱՏԱԿ | Դպրոց-համայնք կապի ամրապնդում<br>Համայնքային միջոցառումներին դպրոցի ակտիվ մասնակցություն<br>Կրթության կառամարման մարմինների և դպրոցի լիարժեք համագործակցություն<br>Համագործակցություն հայաստանյան և արտասահմանյան ԲՈՒՀ-երի հետ,<br>Ծնող- դպրոց- աշակերտ եռամիասնության բոլոր կողմերի համաչափ |

| | |
|---|---|
| | զարգացում<br>Ծնողական համայնքի ակտիվություն<br>Դպրոցի և տարբեր կրթական կազմակերպությունների ակտիվ համագործակցույուն<br>Կապ միջազգային կրթական կազմակերպությունների հետ<br>Աշակերտների ակտիվ մասնակցություն ՏԻՄ և Լոռու մարզպետարանի կողմից կազմակերպված ճամբարներին<br>Աշակերտների ակտիվ մասնակցություն Արմաթի կողմից կազմակերպված մրցույթներին, ցուցահանդեսներին |
| **ԽՆԴԻՐ** | Ամրապնդել դպրոց-համայնք կապը<br>Մասնակցել համայնքային տարբեր միջոցառումների<br>Ակտիվորեն համագործակցել կրթության կառավարման մարմինների հետ<br>Համագործակցել հայաստանյան և արտասահմանյան /հնարավորության դեպքում/ ԲՈՒՀ-երի հետ<br>Ամրապնդել դպրոցի կապը ծնողական համայնքի<br>Ակտիվորեն ներգրավել ծնողներին ներդպրոցական տարբեր միջոցառումներին<br>Աշակերտներին խրախուսել մասնակցելու ՏԻՄ և Լոռու մարզպետարանի կազմակերպած ճամբարներին<br>Խրախուսել աշակերտների մասնակցությունը Արմաթի կողմից կազմակերպվող միջոցառումներին: |

| | |
|---|---|
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | Խրախուսել աշակերտների մասնակցությունը տարբեր միջոցառումների, տալ շնորհակալագրեր և պատվոգրեր<br>Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ՝ ինչպես դասարանային, այնպես էլ համադպրոցական<br>Ստեղծել առաջարկությունների և բողոքների մատյաններ |
| **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ** | ●Տնօրեն,<br>Փոխտնօրեն, դասղեկներ, ԴԱԿ |
| **ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ** | 2024-2029թթ. |
| **ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** | Ծնողները ակտիվորեն մասնակցում են դպրոցական կյանքին<br>Դպրոցը ակտիվորեն մասնակցում է համայնքային, մարզային և համապետական տարբեր միջոցառումների, տեխնոճամբարների |
| | |
| ***Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը*** | |
| • Դպրոցում աշխատում են թվով 25 աշխատակիցներ, որոնցից 15-ը բարձրագույն մակավարժական կրթությամբ ուսուցիչներ են:<br>• Ուսուցիչների միջին տարիքը 40 տարեկանն է,<br>• Ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ:<br>• Վարպետորեն համադրելով ուսուցման մեթոդներն ու | • Ժամանակակից մեթոդների, ՏՀՏ միջոցների ոչ լիարժեք տիրապետումը՝ որպես ուսումնական գործընթացի խոչընդոտ<br>• Դասալսումների իրականացման, վերլուծության արդյունքում հետադարձ կապի բացակայությունը<br>• Համագործակցությունը այլ դպրոցների հետ բացակայում է: |

| | |
|---|---|
| հնարները, կազմակերպում են ուսանելի դասեր:<br>• Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ<br>• Ուսուցիչներն ակտիվ մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին<br>• Ուսուցիչները մասնակցում են պարտադիր ատեստավորման դասընթացներին:<br>• Ուսուցիչները տիրապետում են և ըստ անհրաժեշտության կիրառում են MS Teams հեռավար հարթակի հնարավորությունները: | • Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ- ին և նրանից բխող ծրագրային ու մեթոդական փոփոխություններին<br>• Ուսուցիչները ցանկություն չունեն տարրակարգ ստանալու, խուսափում են մասնակցել կամավոր ատեստավորմանը և<br>• Դեռևս կան ուսուցիչներ, հատկապես ոչ երիտասարդ, որ թերանում են ՏՀՏ-ների կիրառությունից: |




**Ուսումնական մասի հաստիքացուցակ**

**Ուսումնաօժանդակ** **անձնակազմ**

| Հ/հ | Հաստիքի անվանումը | քանակը |
|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 |
| 2 | Ուսումնական գծով փոխտնօրեն | 1 |
| 3 | ուսուցիչներ | 15 |
| 4 | գործավար | 1 |
| 5 | Էլեկտրոնային կառավարման դասավանդման մասնագետ | 0,75 |
| 6 | զինղեկ | 1 |

| հ/հ | Հաստիքի անվանումը | քանակը |
|---|---|---|
| 1 | Վարչատնտեսական մասի համակարգող | 1 |
| 2 | Ընթացիկ վերանորոգման բանվոր | 0,75 |
| 3 | պահակ | 4 |
| 4 | հավաքարար | 2 |
| | | |

*Աշակերտական համակազմը*

| | |
|---|---|
| Միջինից բարձր առաջադիմությունը<br>Մասնակցությունը ստեղծագործական և սպորտային մրցույթներին<br>•Ակտիվ մասնակցությունը «Կենգուրու , Մեղու հանրապետական մրցույթներին<br>•Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշը<br>•Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին, սպորտային մրցումների, պարի, ասմունքի փառատոնների: [2]<br>•Ակտիվորեն մասնակցում են առարկայական օլիմպիադաներին, տարածքային փուլի մասնակցությունը զգալի է<br>Աշակերտների շրջանում բացառված են օտարման, բռնության, բուլինգի դեպքերը: Հաճախակի կազմակերպվում դասղեկական ժամեր, որոնց ընթացքում քննարկվում են աշակերտներին հուզող հարցերը: Դասղեկական աշխատանքների պլանները տեղադրված են <<Պաշարների շտեմարանում>>[3]:<br>Դպրոցի ներքին գնահատումը, որտեղ արտացոլված են դպրոցի տվյալների վերլուծությունը 2019-2023թթ, տեղադրված է <<Պաշարների շտեմարանում>>: | Ուսման նկատմամբ մոտիվացիայի  պակասը<br>Աշակերտների ինքնագնահատման ոչ օբյեկտիվ լինելը<br>Սովորողների ընտանեկան /սոցիալական վիճակը/<br>Քիչ է առարկայական օլիմպիադաների մարզային փուլի մասնակիցների թիվը<br>Դպրոցում կան երկհամակազմ դասարաններ, որոնք բացասական ազդեցություն են ունենում ուսման որակի վրա: |

[2] https://www.facebook.com/profile.php?id=100028312034115
[3] https://lib.armedu.am/article/5308

Դասարանների և աշակերտների թիվը ընթացիկ տարվա առաջին կիսամյակում:

| Դասարանները | Դասարանների թիվը | Աշակերտների թիվը |
|---|---|---|
| I դասարան | 0,5 | 4 |
| II դասարան | 1 | 3 |
| III դասարան | 0,5 | 5 |
| IV դասարան | 1 | 6 |
| V դասարան | 1 | 8 |
| VI դասարան | 1 | 4 |
| VII դասարան | 1 | 7 |
| VIII դասարան | 1 | 14 |
| IX դասարան | 1 | 4 |
| X դասարան | 0,5 | 2 |
| XI դասարան | 0,5 | 8 |
| XII դասարան | 1 | 8 |
| ընդամենը | 10 | 73 |

## *Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները:*

| | |
|---|---|
| Դպրոցում դասավանդում են աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ:<br>Մանկավարժները հիմնականում պատրաստակամ են կատարելագործել գիտելիքները, ուսուցման մեթոդները՝ ժամանակի պահանջներին բավարարող կրթության ապահովման նպատակով:<br>Համաճարակի պայմաններում ուսուցիչները իրականացրեցին | Ուսուցիչների շրջանում կան այնպիսի մանկավարժներ, ովքեր դժվարությամբ են հարմարվում անընդհատ փոփոխությունների<br>Կան ուսուցիչներ, ովքեր ընդդիմանում են սովորել նոր գործիքները և կիրառել դասերի ժամանակ<br>Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների այս պահին չկան |

| | |
|---|---|
| հեռավար ուսուցում, որը նպաստեց, որ ուսուցիչները տիրապետեն հեռավար գործիքների իրականացնում են հեռավար ուսուցում, մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams հեռավար հարթակն իր բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում է առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից:<br>Դպրոցի բոլոր 15 ուսուցիչները ունեն բարձրագույն մանկավարժական որակավորում :<br>Մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացվում է արդարացի և բարեխիղճ եղանակով, գործում է նրանց աջակցության և զարգացման համակարգ.<br>Մանկավարժական աշխատողների թափուր տեղերի համալրումն իրականացվում է սահմանված ընթացակարգերի համաձայն՝ ապահովվելով գործընթացների թափանցիկությունն ու արդարությունը.<br>Մանկավարժական աշխատողի թափուր տեղի մրցույթի արդյունքում դրա չհամալրման պարագայում արդյունավետ կիրառվում են օրենսդրության շրջանակներում նախատեսված գործիքակազմերը՝ առարկայի ուսուցման շարունակականությունն ապահովելու նպատակով.<br>Դասաբաշխումներն իրականացվում են կրթության որակի բարելավման և արդյունավետության բարձրացման սկզբունքներից ելնելով, դրանց կազմման սկզբունքները թափանցիկ են և ընկալելի գործընթացի բոլոր մասնակիցների համար.<br>Մանկավարժական աշխատողները խրախուսվում են մասնագիտական զարգացման տարաբնույթ ծրագրերի մասնակցության համար<br>Հաստատությունում պարբերաբար իրականացվում են դասալսումներ տնօրենի և փոխտնօրենի կողմից, դրանց արդյունքները քննարկվում են առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ, մանկավարժներին ցուցաբերվում է անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական աջակցություն:<br>Տնօրենության կողմից իրականացվում է մանկավարժների վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում և | |

| | |
|---|---|
| հետադարձ կապի ապահովվում՝ դրանց արդյունքում մանկավարժների կողմից ուսուցման գործընթացում նոր հմտությունների, մեթոդների կիրառությունն ապահովելու համար:<br><br>Տնօրենության կողմից խրախուսվում է կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցությունը : Վերջերս մեր դպրոց ընդունվեցին Արցախից ժամանած երկու ուսուցիչներ, որոնք ևս ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: | |
| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
| Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում | ●Շահագրգռվածության կամ ցանկության պակաս<br>●Ֆորսմաժորային իրավիճակներ<br>ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>●Համատեղ աշխատանքների, հետևողական և մշակված գործողությունների իրականացում<br>Ուսուցիչների մոտ մոտիվացիայի ավելացում |
| ՆՊԱՏԱԿ | ՏՀՏ գործիքների լիարժեք կիրառում դասապրոցեսի ընթացքում<br>Դասալսումների կանոնավոր իրականացում և հետադարձ կապի ապահովում<br>Համագործակցություն այլ դպրոցների հետ<br>Նոր ՀՊՉ-ի տիրապետում ուսուցիչների կողմից<br>Ուսուցիչների կամավոր ատեստավորում և տարակարգի ստացում |

| | |
|---|---|
| | Աշակերտների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի ավելացում<br>Առարկայական օլիմպիադաների մասնակիցների ավելացում |
| ԽՆԴԻՐ | Լիարժեք կիրառել ՏՀՏ գործիքները դասապրոցեսում<br>Կանոնավոր իրականացնել դասալսումներ, ապահովել հետադարձ կապը<br>Համագործակցել այլ դպրոցների հետ<br>Տիրապետել նոր ՀՊՉ-ին<br>Անցնել կամավոր ատեստավորում, ստանալ տարակարգ<br>Ավելացնել աշակերտների մոտիվացիան ուսման նկատմամբ<br>Ավելացնել առարկայական օլիմպիադայի մասնակիցների թիվը |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Խրախուսել ուսուցիչներին կիրառել ՏՀՏ գործիքները դասապրոցեսի ընթացքում<br>Կանոնավոր իրականացնել դասալսումներ, ապահովել հետադարձ կապը<br>Համագործակցել այլ դպրոցների հետ<br>Մասնակցել նոր ՀՊՉ-ի վերապատրաստումներին<br>Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը և տարակարգի ստացմանը<br>Խրախուսել աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, բարձր միավորներ ստացած աշակերտներին տալ պատվոգրեր |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ●Տնօրեն,<br>Փոխտնօրեն, դասղեկներ, ԴԱԿ |
| ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | 2024-2029թթ. |

| | |
|---|---|
| <u>ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</u> | Ուսուցիչները կիրառում են ՏՀՏ գործիքները դասապրոցեսում<br>Աշակերտները ակտիվորեն մասնակցում են առարկայական օլիմպիադաներին<br>Տարեցտարի ավելանում են կամավոր ատեստավորված և տարակարգ ստացած ուսուցիչների թիվը |
| ***Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարությունների ներկայացում*** | |
| Դպրոցում դասերի ժամանակ օգտագործվում են ՏՀՏ գործիքներ, ծրագրեր: Աշակերտները հաճախ են կազմակերպում բաց դասեր՝ օգտագործելով Microsoft Power Point ծրագրի հնարավորությունները, դրանք պրոյեկտորով ցուցադրում:<br>Արմաթ ինժեներական լաբորատորիան լավագույն գործընկերներից է, նրա դասերի ընթացքում ստացված գիտելիքները օգնում են երեխաներին զարգացնել իրենց նորարարական գաղափարների իրագործմանը: Դպրոցի սաների կողմից ստեղծվել են տարբեր ռոբոտներ, խաղեր, հետաքրքիր ծրագրեր:<br>ԹԳՀԳ առարկայի վերջնարդյունքի ապահովմանը հասնելու համար խիստ կարևոր է Արմաթի դերը դպրոցում՝<br>ՏՀՏ գործիքների իմացության կատերալագործման ուղղությամբ: Ուսուցիչներն իրազեկված են «Հայկական կրթական միջավայր, «Պաշարների շտեմարան, ԿԶՆԱԿ-ի կայքերի մասին:<br>Հաճախակի օգտվում են ԿԶՆԱԿ-ում տեղադրված պաշարներից:<br>Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու նպատակով իրակացվում են դասղեկական ժամեր, որի ընթացքում ցուցադրվաում են տարբեր | ԹԳՀԳ և ինֆորմատիկա առարկաների վերջնարդյունքը ապահովելու համար անհրաժեշտ է նորագույն համակարգիչներով համալրումը:<br>Անհրաժեշտություն կա առարկայական կաբինետների ստեղծման և վերազինման<br>Լաբորատորիայի բացակայության պայմաններում պատրաստի ցուցադրությունների, գործնական աշխատանքների առցանց ռեսուրսները չօգտագործելը: |

| | |
|---|---|
| ուսուցողական ֆիլմեր, հոլովակներ, աշակերտների պատրաստած ցուցադրություններ: | |
| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
| Օգտագործվող ՏՀՏ կրթական այլ տեխնոլոգիաների և նորարությունների կիրառում | ●Ֆինանսական միջոցների սակավություն<br>ՏՀՏ սարքավորումների ոչ բավարարություն<br>●Ֆորսմաժորային իրավիճակներ<br>ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>●Համատեղ աշխատանքների, հետևողական և մշակված գործողությունների իրականացում |
| ՆՊԱՏԱԿ | ՏՀՏ սարքավորումներով համալրում և կիրառում դասապրոցեսի ընթացքում<br>Առարկայական կաբինետների ստեղծում և վերազինում նոր ՀՊՉ պահանջներին համապատասխան<br>Պատրաստի ցուցադրությունների, գործնական աշխատանքների, առցանց ռեսուրսների կիրառում |
| ԽՆԴԻՐ | Համալրել ՏՀՏ սարքավորումներով, սմարթ գրատախտակով և կիրառել դասապրոցեսի ընթացքում<br>Ստեղծել Սմարթ դասասենյակ, համալրված անհրաժեշտ գույքով<br>Ստեղծել առարկայական կաբինետներ, վերազինել նոր ՀՊՉ |

| | |
|---|---|
| | պահանջներին համապատասխան<br>Պատրաստել ցուցադրություններ, կատարել գործնական աշխատանքներ, կիրառել առցանց ռեսուրսներ |
| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Ստեղծել Սմարթ դասասենյակ, համալրել անհրաժեշտ գույքով<br>Ստեղծել առարակայակն կաբինետներ, կիրառել դասապրոցեսի ընթացքում |
| ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ●Տնօրեն,<br>Փոխտնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող |
| ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ | 2024-2029թթ. |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Դպրոցն ունի Սմարթ դասասենյակ, որի ռեսուրսները կկիրառվի դասերի ընթացքում<br>Դպրոցը համալրված է անհրաժեշտ ՏՀՏ սարքավորումներով<br>Դպրոցն ունի առարկայական կաբինետներ, համալրված անհրաժեշտ սարքավորումներով և լաբորատոր գույքով |
| ***Զափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն*** | |
| Ուսուցիչները մասնակցում են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված նոր ՀՊԶ-ի ներդրման դասընթացներին և վերապատրաստումների: Դպրոցի 2, 5, 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները պարբերաբար մասնակցում են դասընթացների:<br>Դպրոցում իրականացվում են դասալսումներ, փորձի փոխանակում: ԿԶՆԱԿ-ի կայքում տեղադրված պաշարները մեծ օգնություն են ուսուցիչների համար՝ դասապրոցն ավելի արդյունավետ իրագործելու համար: | Ուսուցիչները դեռևս դժվարությամբ են պատկերացնում գնահատման նոր համակարգի ներդրումը, և դրանում տեսնում են թաքնված վտանգներ:<br>Համայնքի կարիքներին համապատասխան մասնագիտական կողմնորոշում ապահովող ուսումնական խմբակների բացակայություն(գյուղատնտեսություն, անասնապահություն, զբոսաշրջություն): |

Գնահատման նոր մեթոդաբանությանը ավելի լավ տիրապետելու համար վերջերս կազմակերպվեց դասընթաց դպրոցի տնօրենության և ուսուցիչների համար:
2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում նախատեսվում է իրականացնել երկարօրյա խմբակներ՝ հետ մնացող աշակերտներին աջակցելու համար: Պլանավորված է նաև իրականացնել նախագծային ուսուցում և ուսումնական խմբակներ:
2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանով նախատեսված են հետևյալ ուսումնական խմբակները՝

- ✓ <<Ընթերցանության գաղտնիքները>>՝ տարրական դպրոց
- ✓ <<Իմ հայրենիքի գողտրիկ անկյունը>>, <<Հետաքրքրաշարժ մաթեմատիկա>>, <<Ընթերցանություն և ասմունք>>՝ միջին դպրոց,
- ✓ <<Առողջ ապրելակերպ>> պարտադիր խմբակները,

Ուսումնական նախագծեր՝

- ✓ <<Մաթեմատիկայի գաղտնիքները>> նախագծային աշխատանք՝ 7-րդ դասարան

իսկ հետ մնացող աշակերտների համար՝ երկարօրյա խմբակներ:
2023-2024 ուստարվա 1-ին դասարանում սովորում են 4 աշակերտներ, ակտիվ են, ցուցաբերում են միջինից բարձր գիտելիքներ՝ ըստ բնութագրիչների:
2-րդ դասարանի 3 աշակերտները բնութագրվել են նոր չափորոշչային պահանջների համապատասխան բնութագրիչներով, որոնցում գերակշռում են Բ և Գ մակարդակների բնութագրիչները:

**Ուսման առաջադիմությունը և որակը նախորդ 4 տարիների համար ներկայացվում է դիագրամայի տեսքով:**




**2023-2024 ուստարվա 3-12-րդ դասարանի աշակերտների առաջադիմությունը` ըստ դասարանների /տոկոսներով/**



| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՌԻՍԿԵՐ |
|---|---|
| **Նոր չափորոշիչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում** | Գնահատման նոր համակարգի կիրառման դժվարություններ ուսուցիչների կողմից<br>●Ֆորսմաժորային իրավիճակներ<br>ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>Ուսուցիչների մասնակցությունը դաընթացների և վերապատրաստումների |
| ՆՊԱՏԱԿ | Նոր չափորոշիչի պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում<br>Գնահատման նոր համակարգի կիրառում<br>Նոր չափորոշիչային պահանջներին համապատասխան ուսումնական խմբակների ստեղծում և ծրագրի իրականացում<br>Հետ մնացող աշակերտների հետ երկարօրյա ուսուցման կազմակերպում<br>Նախագծային աշխատանքների իրականացում |
| ԽՆԴԻՐ | Ապահովել նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան կրթության որակ<br>Կիրառել գնահատման նոր համակարգը դպրոցներում<br>Նոր չափորոշիչային պահանջներին համապատասխան ստեղծել և իրականացնել ուսումնական խմբակների աշխատանքը<br>Կազմակերպել երկարօրյա խմբակներ՝ հետ մնացող աշակերտների |

| | |
|---|---|
| | համար<br>Իրականացնել նախագծային աշխատանքներ |
| [ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ]() | Ուսումնական պլանի մեջ ներառել ուսումնական, երկարօրյա խմբակները<br>Վերահսկել նրանց աշխատանքի կազմակերպումը<br>Նախատեսել նախագծային աշխատանքների և ապահովել դրանց իրականացումը<br>Հետեղական աշխատանքներ տանել ուսուցիչներին նոր ՀՊՉ պահանջների հետ ծանոթացնելու և գնահատման նոր համակարգը կիրաելու ուղղությամբ: |
| [ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ]() | ●Տնօրեն,<br>Փոխտնօրեն |
| [ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ]() | 2024-2029թթ. |
| [ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ]() | Դպրոցն ապահովում է կրթության նոր ՀՊՉ-ի պահանջներին<br>համապատասխան կրթության որակը<br>Իրականացվում են ուսումնական խմբակներ,<br>Հետ մնացող աշակերտները ընդգրկված են երկարօրյա խմբակներում,<br>նրանց հետ իրականացվում են աշխատանքներ<br>Իրականացվում են նախագծային աշխատանքներ |
| ***Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն*** | |
| 2021թվականին վերանորոգվել է ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված դասասենյակը՝ ապահովված որոշակի գույքով:<br>Դպրոցի առաջին հարկում վերանորոգվել է հաշամանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույց: | Անհրաժեշտություն կա գույքի համալրման և խելամիտ հարմարեցումների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի:<br>Հաշմանդամություն ունեցաղ երեխաների համար նախատեսված սանհանգույցը կարիք ունի որոշակի լրացուցիչ |

| | |
|---|---|
